ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# ՀՐԱՄԱՆ

---

No 143-Ա/3 «23» օգոստոսի 2024թ.

## «ՄԱՖ ՓՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-24/59» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 23-ի նիստի արձանագրությունն առ այն, որ գնման ընթացակարգի 4-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից «Մաֆ փրոդակշն» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ armeps.am համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները և «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Մաֆ փրոդակշն» ՍՊԸ-ն 4-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Մաֆ փրոդակշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02271945, գործունեության հասցեն՝ ք.Երևան, Ներքին Շենգավիթ 9-րդ փ, 5/1) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

8/23/2024

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ